

D. KARAMANOUKIAN, El Genocidio Armenio en la Prensa del Uruguay, Año 1915. Montevideo, ediciones „Ani“, 1985, 179 p.

Գ. ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայկական ցեղասպանությունը ըստ Ուրուգվայի 1915 թվականի մամուլի:

Վերջին տարիներին՝ օտար լնդուներով բազմաթիվ գրքեր են լույս տեսել Հայկական հարցի վերաբերյալ: Դրանցից է 1985 թ. Մոնտեվիդեոյում իսպաներենով լույս տեսած Դանիել Կարամանուկյանի գիրքը: Հեղինակը Ուրուգվայի 1915 թ. պարբերականներում փնտրել է զարասկզբի հրեշավոր արարքի մասին՝ եղած՝ արձագանքները և երեք տարվա տքնաշան աշխատանքից հետո հրատարակել այս ուսումնասիրությունը: Գիրքը ձևավորված է հնահատակներին, նրանց, որոնք ընկան և որոնք ընկնում են պայթարելով: Այն սկսվում է հեղինակի շնորհակալական խոսքով՝ ուղղված բոլոր նրանց, ովքեր օժանդակել են գրքի լույս տեսնելուն: Հարավային Ամերիկայի հայկական համայնքներին և ընդհանրապես այս երկրներում ապրող իսպանախոս երիտասարդներին ուղղված գրքում Կարամանուկյանը օճրկու խոսքով ըացատրում է, թե ինչ է ներկայացնում 70 տարվա ընթացքում շլուծված Հայկական հարցը: Ներածական մասում պրոֆեսոր Պետրո Գ. Քյուրոլյան-Բարսումյանը, ներկայացնելով Կարամանուկյանի դասակարգած փաստաթղթերը, ըստ արժանվույն գնահատում և արժեքավորում է կատարված գործի մեծ նշանակությունը:

Գրքի «Պատմական տեղեկատու» բաժինը գրել է լիցենցիատ Ա. Դուրեշյանը: Նա ընթերցողներին ներկայացնում է դարավոր կյանք ունեցող հայ ժողովրդի պատմությունը, պանաւր նվաճումներն ու արյունով ներկված էջերը: Խոսքով օսմանյան ժամանակաշրջանի մասին, Դուրեշյանն ընդգծում է, որ հայ ժողովուրդը կիսել է կայսրության լծին ենթարկված յուր ժողովուրդների ճակատագրով: սպանություններ, տարրական իրավունքների մշտական նախադրումներ, կրոնական անհանդուրժողականություն, հալածանքներ և վերջապես բռնի տեղահանություններ ու շարդ: Ի պաշտպանություն հայերի, բողոքի իրենց արդար ձայնն են արձարցրել համաշխարհային համարում ունեցող անձինք, ինչպես Գաղատոնը, Փան ժորհուր, Անատոլ Ֆրանսը, Կլեմանսոն, Իոհան Լեփեխտը, Հենրի Մորգենթաուն, Աբնուլ Բոյուրի, Տրիտոլֆ Նանսենը և շատ ուրիշներ: Վերջիններիս վկայությունները, նույնիսկ եղեռնագործները ալլեալ տեղեկությունները ամփոփված են գրքի հիմնական մասում: Այն պարունակում է 221 փաստաթուղթ՝ արտատպված Մոնտեվիդեոյում, հունվարի 2-ից մինչև դեկտեմբերի 2-ը լույս տեսած ուրուգվայական մամուլից: Այստեղ կան տարբեր երկրներից ստացված, մեծ մասամբ պաշտոնական տեղեկություններ. Լոնդոնից (60), Նյու Յորքից (50), Վաշինգտոնից (18), Փարիզից (20), Հռոմից (26), Աթենքից (10), Ամստերդամից (10): Լուսեր կան նաև Տուրինից, Նեապոլից, Կահիրեից և Պետրոգրադից:

Սուլիսն Համիդի, աչպես կոչված, Կարմիր սուլթանի, որդեգրած քաղաքականության շարունակողները ևղան 1908 թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքերը (էնվեր, Բալնաթ, Ջևալ): Նրանք ընդունել էին մի տեսակետ. Հայկական հարցին վերջ դնելու լավագույն և ամենաարագ միջոցը հենց հայերին վերացնելն է (տե՛ս, օրինակ, № 151, 152, 168, 126 և ալլն): Համարյա ոչ ոք չէր կարող մտածել, որ վերջիններիս դժոկարատական ճառերի հետևում թաքնված է պանթուրքիզմը՝ հակամարդկային ուսխատական գաղափարախոսությունը: Էնվեր փաշան 1915 թ. սեպտեմբերին ասել է. «Մրանից հետո մեր քաղաքականությունը կու՛նենա հետևյալ լուզնագը. Թուրքիան թուրքերի համար: Մենք արդեն սկսել ենք աղատվել մեղատաշին հերթին խանգարողներից՝ հայերից: Ապա կազատվենք հույներից, իսկ հետո հրեաներից: Հերթը կհասնի նաև օտարերկրացիներին... նրանց մեջ նույնիսկ գերմանացիներին» (№ 120): Նույն դիրքորոշումն ունեւր նաև ներքին գործերի մինիստր Բալնաթը, որը դեռևս նույն իվականի հունվարի սկզբին այսպես էր արտահայտվել. «Այսուհետև Օսմանյան կայսրության մեջ սուղ կլինի միմիայն թուրքերի համար» (№ 5): Նրիտթուրքերի կուսակցական օր-

զան «Թանրն»-ը խմբագրական հոդվածներից մեկում գրել է. «Թուրքիան միշտ կործանվելու վտանգ կունենա, եթե չկոտորի հայերին կամ շատիպի նրանց դավանափոխ լինելը (№ 135)»։ Դա ոչ միայն հասարակ ժողովրդի դեմ ուղղված ոճիր էր, այլև բոլոր խավերի, Հիշենք ապրիլի 24-ին նահատակված հայ մտավորականության լավագույն դեմքերին։ Նման ճակատագրից չեն խուսափել նույնիսկ պառլամենտի և պետական վարչակազմի պաշտոնյա անդամներ։ Հստ բրիտանական պաշտոնական տեղեկության, հայ երեսփոխաններ վարդգես և Զոհրապ է-ֆենդիները, ինչպես նաև հանրային աշխատանքների և հողագործության նախկին մինիստրներն ու մի հայտնի քաղաքական գործիչ Ուրֆայից Դիարբեքիր տեղափոխվելիս ստոր կերպով աղանվել են (№ 152)։ Այս բուրդի մեջ քիչ չի եղել Գերմանիայի միջամտությունն ու «օժանդակությունը» գերմանական զինվորականները ավելի քան 30 տարի մնարել են Թուրքիայում և կազմակերպել թուրքական բանակը (№ 77)։ Քալենաթ փաշան վստահ հայտարարել է, որ կանցնի 50 տարի և ամեն ինչ կմոռացվի եղեռնի մասին (№ 152)։ Արդեն 1939 թ. Հիտլերը հայտարարում էր. «Ապանեք առանց կարեկցության, նույնիսկ երեխաներին, կանանց ու ծնրերին։ Ամեն ինչ կմոռացվի։ Ո՞վ է հիշում այսօր հայերի շարքը (էջ 26)։ Հիտլերը, ինչպես մարդկության դեմ ոճիր նյութող յուրաքանչյուր հանցագործ, առաջնորդվել է միևնույն՝ Քալենաթի սկզբունքներով։

Գերմանացիները, թեպետ քաղաքակիրթ, մեղքի իրենց բաժինն ունեն այս հրեշագործությունների մեջ. ժողովրդի գերմանական հյուպատոսներ ղեկավարել կամ քաջալերել են թուրքերի օգտագործած բարբարոսական մեթոդներն ու ձևերը։ Այսպես, Հալենպի հյուպատոս Ռոսինը ղեկավարել է Այնթափ, որպեսզի անձամբ ղեկավարի այդ գործողությունները։ Իսկ թաղակալանաբարոն Ուզլենհայմի գրգռումով դաշնակիցների կանայք ու երեխաները Այնթափից հեռացվելով, Ուրֆա են տեղափոխվում, որպեսզի վերջիններս ականատես չլինեն թուրք զինվորների՝ փողոցներում կատարած բարբարոսություններին, որտեղ նրանք բառիս բուն իմաստով լողում էին առյուծ մեջ (էջ 106)։ Նման գերմանացիների մեղքը ավելի աններելի է թվում այն պայմաններում, երբ նույնիսկ հենց թուրքական վարչակազմի թեկուզ փոքրաթիվ, միջին և ցածր օդակի որոշ պաշտոնյաներ դեմ դուրս եկան հակամարդկային այս եղանագործություններին։ Օսմանյան կայսրության ղեկավարներից մեծ վեզիրը, շեյխ ուլ-Իսլամը, համաձայն լինի հայերի դեմ կիրառվող անմարդկային գործողություններին։ Ավելին՝ Հալենպի վալի Գալիբ բեյը, երբ սկսվել են հայերի բռնի տեղահանությունները, բողոքագիր է ուղարկել Ստամբուլ և ապա դրա համար կյանքի գնով վճարել։ Նրա հաջորդ Ջեյալ բեյը նույնպես հրաժարվել է կատարել իրեն սրված հրամանները։ Վերջինիս հաջորդող Բեդիր Սամին, ինչպես նաև Մալաթիայի վալիներ Նարի բեյն ու Ռաշիդ փաշան բողոքագրեր են գրել կառավարության քաղաքականության դեմ (էջ 11)։

Գրքում ղեկավարված վավերագրերի ճշմարտացիության և օրյակտիվության երաշխիքները հուսալի են, քանի որ խոսքը վերաբերում է դեպքերի վայրից հազարավոր մղոններ հեռու գտնվող և առաջին ճամաշխարհային պատերազմին ոչ մի մասնակցություն չունեցած մի երկրի մամուլի արձագանքի մասին։ Աշխատության վերջին մասում՝ հավելվածում, կան փաստագրական լուսանկարներ Գ. Կտրամանուկյանի, Ա. Աղատյանի և Ա. Դուրեշյանի հավաքածուներից, վիճակագրական տվյալներ ու աղյուսակներ։

Այսօր, երբ ավելի քան երբևէ առավել մեծ ճանաչում ունի Հայկական հարցը, երբ միջազգային իրավաբանական և իրավապաշտպան մի շարք կազմակերպություններ, քննելով այն, դատապարտել ու մեղադրել են Թուրքիային, այս և նման դրքերի նշանակությունը շատ ավելի է մեծանում։ Հարկ է, որ օտարալեզու այս գրքերը թարգմանաբար (հայերեն, ինչպես նաև ռուսերեն) արատարակվեն, որպեսզի հարցի էությունն ու մանրամասները միութենական քննադատողին մատչելի դառնան։ Դա պետք է լինի հայ մտավորականության պարտականություն այս հույժ հրատապ հարցի ճանաչման գործում։

Ա. Փ. ՀԱԼԵՆՊԵՆ